ԵՐԵՔՇԱԲԹԻ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881—№ 261

№ 261—ԵՐԵՔՇԱԲԹԻ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1881

# ՀԱՅԱՍՏԱՆ

ՔՍԱՆԵՒԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

*բատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի եւ տօն օրերից։*
*Տարեկան գինն է 10 ռուբլի։*
*Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։*

*Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետ։*

*Յօդուածներ դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію «Мегу Айастани», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani» à Tiflis (Caucase).*

*Խմբագրութեանս ուղղած Քէ՛ յօդուածները եւ Քէ՛ նամակները պէտք է պարգ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։*

*Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։*
*Յայտարարութիւններն ընդունվում են խմբագրատանը եւ պ. Շահվերդեանի տավիլիօնում։*
*Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։*

## „ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՄԵՆՕՐԵԱՑ ԼՐԱԳԻՐԸ

## 1882 Թ.

*կրհրատարակվի ևոյնիսկ ուղղութեամբ։*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։** *Առաջնորդող յօդուածներ, ազգային, քաղաքական, հեռագիրներ, բանասիրական, ֆելիէտօն, մանր լուրեր, խառն լուրեր, պատասխանիք խմբագրութեան, եւ յայտարարութիւններ։*

*Տարեկան բաժանորդագինն է 10 ռուբլի։ Ստորագրվել կարելի է խմբագրատանը, հեռագրական կայարանի մօտ Ս. վարդանեանի տանը։ Փոստայի եւ տուն հասցնելու ՆԱԽՔԸ խմբագրութեան վերայ է։*

*Ծանօթ.։ Ներկայ թուականին «ՄԵՂՈՒԻՆ» հրատարակվեցաւ չաթթը վեց անգամ, օգնութեամբ «Հաւատարմական Ընկերութեան», որ այս տարի բաւական նշանաւոր դէֆիցիտ ունեցաւ։ Առաջիկայ տարին «ՄԵՂՈՒԻ» վեց թէ աւելի պակաս կամ աւելի չատ անգամ հրատարակվելը կախուած կ՚ունենայ ստորագրվողների թուից։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Ազգային.—Քաղաքի մաքրութեան վերայ.—Շուշու հայ աղջիկների ուսման մասին.—Թղթակցութիւններ Մօսկվայից, Բագուից, Ղզլարից, Արտանուճից, Ստաւրապօլից եւ Թիֆլիզից։
Քաղաքական.—Սպանիա.—Քաղաքական լուրեր։
Մեղուի հեռագիրներ։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։

## ԱԶԳԱՅԻՆ

### ՔԱՂԱՔԻ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾ։

Լրագրիս 255 համարում խօսելով քաղաքիս մաքրութեան վերայ՝ յայտնեցինք մեր միտքը, որ քաղաքի մաքրութեանը նպաստելու եւ քաղաքի մաքրութեան վերայ հսկելու համար ամենալաւ միջոցն է անմաքրութեանց պատճառները սպառեցնելը այդ անմաքրութեանց գլխաւոր աղբիւրը, ինչպէս ասացինք մենք, մասնաւոր մարդոց տներն ու բակերն են։ Մենք ասացինք, որ այդ անմաքրութեանց աղբիւրը սպառեցնելու համար միայն մէկ միջոց կայ, այն է—մասնաւոր տների բակերի մաքրութիւնը կապել քաղաքի փողոցների մաքրութեան հետ։ Մենք միեւնոյն ժամանակ առաջարկեցինք այն եղանակն, թէ ինչպէս պէտք է, ըստ մեր կարծեաց, իրագործել այդ։ յայտնի է մենք չենք պնդում, որ մեր առաջարկած եղանակը ամենալաւն է, ո՛չ, գուցէ քաղաքային վարչութիւնը աւելի լաւ միջոց գտնէ, դորա դէմ մենք ոչինչ չունինք ասելու։ Բայց մենք կրկնում ենք, որ քաղաքը միայն այն ժամանակ կարելի է մաքուր պահպանել, երբ որ մասնաւոր մարդոց բակերը մաքուր կը պահպանվին եւ այն կը լինի միայն այն ժամանակ, երբ որ մասնաւոր բակերի մաքրութիւնը քաղաքը իր վերայ կառնի եւ կը կապէ նրան փողոցների մաքրութեան հետ։ Մենք հաւատում ենք, որ քաղաքիս տանուտէրները եւ բոլոր բնակիչները շատ ուրախ եւ շնորհակալ կը լինին, եթէ քաղաքային վարչութիւնը ազատէ նրանց այդ հոգսից եւ նոքա ուրախութեամբ այն գումարի կրկնապատիկը եւ եռապատիկը կը վճարեն, որ մինչեւ այժմ նոքա ծախսեն անում այդ բանի համար։

Բայց բացի մասնաւոր տների բակերը մի ուրիշ անմաքրութեան աղբիւր էլ կայ, որը նմանապէս պէտք է ոչնչացնել, եթէ ուզում ենք քաղաքի փողոցները աղբից եւ փոշուց ազատել։ Որքան էլ քաղաքային վարչութիւնը քերէ քաղաքի փողոցները, չի կարող նոցա մաքուր պահպանել, եթէ նա այս անմաքրութեանց աղբիւրն էլ չոչնչացնէ. այս անմաքրութեանց աղբիւրը այն քայքայուած հաղարումէկ ճեղք ու ծակոտիք ունեցող սալերն են, որոնցով տեղափոխվում է քաղաքում աղբ, հող, գոլ, աւազ եւ այլն։ Ամեն օր ամեն քաղաքացի եւ նաեւ քաղաքային վարչութեան անդամները այդ տեսնում են, բայց չը գիտենք ինչ պատճառաւ ուշադրութիւն չեն դարձնում։ Դորա առաջն առնելը, ըստ մեր կարծեաց, շատ հեշտ է, հարկաւոր է միայն պահանջել, որ ոչ ոք այդ տեսակ քայքայուած սալերով հող, աղբ եւ այլ այդպիսի բաներ չը տեղափոխէն քաղաքի մէջ եւ քաղաքային վարչութիւնը ինքը պէտք է բարի օրինակ տայ այդ բանում, ըստորում նոյն իսկ քաղաքային վարչութիւնից գործ դրած երկու անուաւոր փոքրիկ սայլերը (տաչքերը) մանաւոր սայլապաններից գործ դրած սայլերից այդ կողմանէ շատ չեն յետ մնում։ Մեզ շատ անգամ պատահել է տեսնել ինչպես նրանցից ցեխը շրջրալի վազում է եւ կամ Թոզի սիւներ բարձրանում։ Մենք կարծում ենք, որ այդ սայլերը ներսից պէտք է պատած լինին երկաթէ թերթով եւ մի օրինաւոր խուփ պէտք է ունենան. վատ չէր լինի, որ սայլերի մէջ նշաններ լինէին, թէ մինչեւ որտեղ կարելի է նրանց լցնել հողով, աւազով, քարով եւ այլն, որ նախ առաջն առնուի այն անվերջ վէճերին, որ լինում են վարձողների եւ սայլապանների մէջ եւ այն չարչարանաց, որ կրում են խեղճ սայլապանները իրանց զօրութիւնից շատ եւ շատ մեծ բեռը կրելով։ Մենք հաւատում ենք, որ եթէ վարչութիւնը յանձնէ իր ինժինէրին, սա ամենայն հեշտութեամբ կարող է կազմել այդ նպատակին յարմար թեթեւ, դիմացկուն եւ ուժան սայլերի ձեւ։

Այստեղ անշուշտ կ՚ասեն շատերը, որ սայլապանները կը դժուարանան նշանակեալ ձեւի սայլեր շինել տալու։ Մենք էլ մտածում ենք դորա վրայ. մենք էլ ի բոլոր սրտէ ցանկանում ենք քանի կարելի է թեթեւացնել խեղճ մարդի վիճակը եւ հնարացնել նորա համար իր օրական հացը վաստակելը, բայց երկու չարեաց փոքրագոյնն է ընտրելի։ Լաւ է սայլապանները մի փոքր եւ ժամանակաւոր նեղութիւն կրեն, քան թէ լքեալ քաղաքը հողով, աղբով եւ բոլոր քաղաքի բնակչաց աչքերը, բերանը, քիթ ու պռունգը եւ պատճառ դառնան զանազան տեսակ հիւանդութեանց եւ իզուր տեղը քաղաքի գանձարանից հազարներ ծախսելուն։

Բացի դորանից, յայտնի է, որ սայլապանները բոլորն էլ այնպէս աղքատ չեն, ինչպէս կարծում են. նոցա մէջ կան եւ ունեւորներ, շատերը սայլերի տէրերից իրանք չեն սայլապանութիւն անում, այլ միայն գործ են դնում իրանց գումարները, եւ վերջապէս մենք կարծում ենք, որ քաղաքը ոչինչ վնաս չի կրիլ, եթէ սայլապաններից խեղճերին նոր ձեւի սայլեր առնելու համար հարկաւոր գումարը փոխարինաբար տայ, նաեւ այդ գումարների կորուստը աչքի առաջ ունենալով, որովհետեւ այդպէս կ՚ազատուի այն աղբ ու հող աւելցնելուց եւ դուրս տանելուց, որ այժմ այդ քայքայուած սայլերը թողնում են քաղաքի փողոցներում եւ այդպէսով նաեւ քաղաքը մաքուր կը կարողանայ պահպանել եւ կը վերադարձնէ տանուտէրին այն, ինչ որ կը կորչի սայլապանների վրայ, առաւելով փոքր ծախսերով քաղաքի մաքրութեան վերայ, քան թէ այժմ առանց նպատակին հասնելու. ծախսում է։

Գ. Ա.

### ՇՈՒՇՈՒ ՀԱՅ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաւատարիմ աղբիւրներից լսում ենք, որ Շուշում շուտով բացուելու է եւ օրիորդական գիմնազիա, այսինքն արդէն եղած քաղաքայինը, որ իր մէջ մօտ քսան հայ աղջիկ է դաստիարակում ընդ տեսչութեամբ կենդանաբան հաշտարար դատաւոր պ. Ֆիշէրի, պիտի դառնայ գիմնազիա։ Գործը, ասում են, դեռ ևս թղթի վրայ է, բայց շուտով իրագործվելուն յոյս կայ, ըստորում այնտեղի հոգաբարձուները այս մասին մեծ ճիգն են թափում։ Ի դէպ ասած՝ այստեղի հոգաբարձուներից մինը հոգաբարձու է եւ հայոց օրիորդաց դպրոցում։ սա մի շատ ուշիկալ գործակատար է, որը ամենայն ջանք գործ է դնում հայոց դպրոցն եւս բարձրացնելու... վերեւից դէպի վայր։

Օրիորդական դպրոցի մասին խօսելով չենք կարող պպ. Ամիրխանեանի եւ Բէգնազարեանցի ուշադրութիւնը չը դարձնել այդ քնքոյշ սեռի դաստիարակութեան վրայ. այդ պարոնները թող տեսնեն, որ իրանց բերած փաստերը այնքան ջրալի էին, որ նրանց մէջ միայն լողանալ կարելի էր—կենդանիներին։ Համարենք թէ հայը շահասէր է, իր որդոց համար արտօնութիւն ձեռք բերելու նպատակով ընտրում է հակազգային դպրոցները. հապա ինչո՞ւ նա այդ միեւնոյն ընթացքով է գնում եւ իր աղջկանց վերաբերութեամբ։ Իսկ մենք կ՚ասենք, որ մեր ժամանակի հայերը անբարոյական հայրեր են, երբ իրանց ընտանեկան սրբութիւնը չեն հասկանում իրանց աղջկանց լաւ մայրեր պատրաստելու վերաբերութեամբ։

Աբգարեանց.

Թիֆլիզ, 11 դեկտեմբերի։

### ՄՕՍԿՎԱ

1 դեկտեմբերի.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Նոյեմբերի 9-ին Մօսկվայում տուած ուսանողական ներկայացման առթիւ «Մշակի» 215 համարում մի թղթակցութիւն էր գրած Մօսկվայից՝ որի վերջին տողերը վատ տպաւորութիւն գործեցին ուսանողութեան վրայ։ Ահա այդ տողերը. «Անտարակոյս այսքան համակրութեան և լիաբուռն առատաձեռնութեան օրինակների չարքում (դէպի նոյեմբերի 9-ին տուած ներկայացումը) եղան և հատ հատ ջնչին և աննշան բացառութիւններ, խափանարիթ ձգտումներ, քսու բանսարկութիւններ և անվայել վարմունքներ. բայց. . . աւելի լաւ է դրանց մասին լռել՝ чтобы гусей не раздразнить» . . .

Ընթերցողը կարդալով ամբողջ յօդուածը՝ այն եզրակացութեան է գալիս՝ որ յօդուածագիրը խօսում է այն ներկայացման մասին, որ ամեն տարի առնում են մեր ուսանողները յօգուտ ուսանողական ժողովին և ի հարկէ ինքն էլ անտօրագիր յօդուածագրի հետ միասին զայրանում է այդ բարի նպատակով տուած ներկայացման մասին եղած «քսու բանսարկութիւնների և անվայել վարմունքների» դէմ. բայց, սպասիր ընթերցող, այստեղ մի փոքրիկ խարդախութիւն կայ. Նոյեմբերի 9-ին տուած ներկայացումը այդ այն ներկայացումը չէ՝ որ ամեն տարի տալիս է «հայ ուսանողութիւնը», ոչ, այլ դա այն մի խումբ անջատաբնակին Լազարեանց ճեմարանի աշակերտ այժմ համալսարանական ուսանողների ներկայացումն է՝ որ նըրանք տուել են իրենց համար առանձին ուսանողական գանձարան հիմնելու նպատակով։ Ընթերցողը տեսնում է՝

# ՎԱՂՈՒՑ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԱՍԻՆ

## ՀՈՒՇԵՐ

(Վերամշակումն «Ազատամարտիկ» անվան դպրոցականների)

Ա. Ղ.

Ես ծնվել եմ Ղարաբաղի Ջրաբերդ գավառի Ծաղկավան գյուղում։ Հայրս՝ Ղազարը, ծնվել է 1870 թվականին։ Նա ծնվել է

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ինչպես հայտնի է, Ռուսաստանի կառավարությունը հրամայել է հայկական հարցի շուրջ ստեղծել հատուկ հանձնաժողով, որի նպատակն է ուսումնասիրել հայկական հարցի ներկա վիճակը և հնարավոր միջոցներ մշակել հայերի կացությունը բարելավելու համար։ Հանձնաժողովի նախագահ է նշանակվել Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ Ն. Ա. Մանասեինը։ Հանձնաժողովի անդամներ են նշանակվել Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ Ա. Ա. Կոնի, Ռուսաստանի Պետական խորհրդի անդամ Ա. Ա. Սաբլերը,

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԿԱՐԻ և ՁԵՒԻ** ուսուցիչ Գրիգոր և Շուշանիկ Անեանցները Ախալցխայից վերադառնալով Տփխի՝ կամենում են կանանց և երեխայոց հագուստների կարել և ձևել սովորացնելու համար արհեստանոց բաց անել, եթէ աշակերտուհիների թիւը 15-ի հասնի:

**Աշակերտուհիք** կարող են լինել և տիկիններ: Արհեստը կ'աւանդուի մայրենի լեզուով: Սովորելու պայմաններին տեղեկանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Գ. Անեանցին կուկիա, Միքայէլեան փողոց, տուն № 27 որտեղ ընդունում են կանանց հագուստների պատուէրներ:

**Անեանցները** աւելացնում են և այս, որ իւրեանց արհեստանոցում սովորած աշակերտուհիները ամենաազատ կերպով կարող են բէմմ'էլէնի ուպրավայում հարցաքննութիւն բռնել:

---

**Յօգուտ Տփխիսի բէալական ուսումնարանի աշակերտաց ապագայ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ, ժողովւում են հայերէն ընթերցանելի գրեանք. Ցանկացողք թո'ղ բարեհաճին ուղարկել իրանց նուէրները «Մեղուի» խմբագրութեան կամ պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցի հասցէով:**

---

**Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամար Տէր-Դաւթեանցի «РУССКОЕ СЛОВО»—նոր դասագիրք ռուսերէն լեզուի, հայ դպրոցների համար, ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ: Ընդունված է վրաստանի և իմերէթի և Երևանայ թեմերի հայոց բոլոր ուսումնարաններում, նոյնպես կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից շատերում: Վաճառվում է թիֆլիսում բացառապէս «կենդրոնական» գրավաճառանոցում: Գինն է 45 կոպէկ: Գումարով գնողներին քանակութեան համեմատ զիջումն կը լինի: Յանկացողները պէտք է ուղղակի դիմեն «կենդրոնական» գրավաճառանոցին.** Տիֆլիսъ. «Центральная книжная торговля»:

---

**Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ**
ԼՐԱԳՐԱԿԱՆ
**ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆԱԿՈՒՄ**
*Բաժանորդագրվում են Ջմիւռնայի «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ» քաղաքական և գրականական հայ ամսագրին. 12 տետրակների գինը 10 ռուբլի է:*

*Հասցէն.* Տիֆլիսъ, Агентство В. Шавердова.

1—10 (շ)

---

**ОКРЫТАЯ ПОДПИСКА НА 1882 ГОДЪ**

**На ежедневную политическую и литературную грузинскую газету**

## „ДРОЭБА“

Газета „ДРОЭБА“ будетъ выходить ежедневно въ форматѣ газетъ средней величины, по слѣдующей программѣ: Телеграммы.—Передовыя статьи по важнѣйшимъ вопросамъ грузинской, русской и заграничной жизни.—Сообщенія и извѣстія.—Провинціальныя корреспонденціи.—Корреспонденціи и извѣстія изъ Россіи и Европы.—Фельетоны изъ общественной жизни.—Судебный отдѣлъ.—Педагогическій отдѣлъ.—Библіографія.—Статьи по исторіи и этнографіи Кавказа и въ особенности Грузіи.—Разныя извѣстія объ открытіяхъ и изобрѣтеніяхъ.—Объявленія казенныя, торговыя и частныя.

**ПОДПИСНАЯ ЦѢНА**

**СЪ ПЕРЕСЫЛКОЙ И ДОСТАВКОЙ ВЪ ГОР. ТИФЛИСЪ И ДРУГ. ГОРОДА.**

| | | |
|---|---|---|
| На | — — — — — — — — — | 9 руб. |
| „ | полгода — — — — — — — | 5 — |
| „ | 3 мѣсяцъ — — — — — — | 3 — |
| „ | 1 мѣсяцъ — — — — — — | 1 — |

Подписка принимается: ва Тифлисѣ, въ конторѣ редакціи, Головинскій проспектъ, д. кн. И. К. Мухранскаго.

Иногородные адресуются: Въ Тифлисъ. Въ редакцію «Дроэба.»

*Редакторъ Сер. Месхи.* *Издатель Ст. Меликовъ.*

---

*Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի «ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱԻԱԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ» առաջին հատորը (Ս. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքեաթներ, ժողոված երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:*

*Այս Ս. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելու յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա Բ. գրքոյկը:*

*Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքեաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միւս տեսակների հրատարակութեան—ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԵԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպես առանձին գրքոյկներով:*

*Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաբաղաբացի համազգայինք չեն դանալ իւրեանց կարեաց չափ ազակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:*

*Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից միմի օրինակ ձրի կը ստանան, բացի այս՝ նոցա ազգանունները կը տպագրուին գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպես մեծ քանակութեամբ ժողոված ունին և կը ցանկան իւրեանց ժողովածուն վաճառել թող բարեհաճին յայտնել իւրեանց պայմանները:*

*Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով, դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:*

*Իմ հասցէն՝* Вагаршапатъ. *Тиграну Навасартяцу.*

Տ. Նաւասարդեանց.

---

*Դուրս եկաւ մամուլի տակից սեդրակ Մանդինեանի հեռաւոր աշխատութիւնը.* **ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ»:** *Մեղուի ընթերցողների ջորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ս. Բ. և Գ. տարիների համար հրահանգ: Վաճառվում է բացառապէս «կենդրոնական» գրավաճառանոցում. գինն է 75 կոպէկ:*

4—6

---

**ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** *խորհուրդը ծանուցանում է իւ գիտութիւն հասարակաց, որ այլ ևս ոչ թոյլատրվել են ընկերութեան անդամ և գրամբ հասուցիլ են, նոյն տեղերից կարող են ստանալ կանոնաւոր անդորրագիր. իսկ այլ նոյեմբերի 15-ին ընդհանուր ժողովի նստի ժամանակ ստորագրվել են մեծ. պ. Գէորգ Հէջուբեանցի մօտ, նոքա կարող են անդորրագիր ստանալ մեծ. պ. Ս. Ծատուրեանցի խանութում:*

*Խորհուրդը խնդրում է նոյնպէս, որ անդամները բարեհաճին շուտով ստանալ անդորրագիրներն, որպէսզի կարող լինին ցոյց տալ նրանց ընդհանուր ժողով մտնելու համար, որ տեղի կ'ունենայ մի քանի օրից յետ: Իսկ այսուհետև անդամակցութեան ստորագրութիւններ ընդունվում են անդորրագիրների ստացմամբ 1) խորհրդի անդամների մօտ, այն է, պ. Ա. Ս. Անանեանցի, գէներալ Գ. Բ. Աւետաւրեանցի, Ց. Ա. Չիլինգարեանցի, Ա. Ց. Մանթաշեանցի, Ա. Մելիք-Ազարեանցի, Ն. Ա. Ամբարձումեանցի, Ն. Բ. Խոսրովեանցի, Բ. Ա. Նաւասարդեանցի և Գ. Մ. Սուձակեանցի մօտ, 2) «կենդրոնական» գրավաճառանոցում 3) «կովկասեան» գրավաճառանոցում, և 4) Եվրեմ Ծատուրեանցի մօտ և. 5) Առևտրական ու փոխադարձ կրեդիտի բանկերի վարչութիւններում:*

*Այս օրերս կ'սկսվեն հրատարակվիլ ընկերութեան անդամների անունները:*

---

**Դուրս եկան մեր տպարանից և վաճառվում են նոյեմ. 25-ից սկսեալ.**

## Ա. ԱՄԵՆՕՐԵԱՅ ՀԱՅՈՒԱԾԱԿԱՆ ՕՐԱՑՈՑ 1882 Փ. Թ.

*Մէջ թուանշաններով, Հայկական կիւրակիներն տպուած են կապոյտ գոյնով, իսկ կայսերական տօն օրերն տպուած են կարմիր գոյնով: Դրուած են Հայկական, Յուլիանեան և Գրիգորեան բոլոր օրերը, տարիները և թուականները: Լուսինը ևս դրուած է:*

*Ա՞ր այժմ հանուռ. դրուած՞ են, օր.՞ պատմական անցքերը Հայոց, մահ նշանաւոր անձանց Հայոց:*

*Օրացոյցի տախտակն գարդարուած է գեղաքանդակ գեղեցիկ պատկերներով, կրօնական և ազգային յիշատակարաններով, դաստառակի, և ս. Էջմիածնայ պատկերներով: Եւ այս բոլորը մի զարդ է ամեն մի հայի գրասենեակի համար:*

Գինն է մէկ ռուբլի

**Բ. ՄԵԾԱԴԻՐ ՕՐԱՑՈՑ 1882 թ. Ք.**

*Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն դրուած են կարգաւ: Հանդերձ «ԾԱՂԻԿ ԸՆՏԱՆԵԱՑ» է. տ. յաւելուածով:*

*Սկզբում գեղաքանդակ պատկերով Ա. Աստուածածնայ Հայրապետին մերոյ. ՍՐԲՈՅՆ ՎԼԴԱՆԻՍԻ: Բ. և կարուց պաշարման. ԼԱՋԱՐԵԱՆՑԻ ՊԱՏԵՐԱԶՄՆ:*

Գինն է մի նէ 600 վէրստ 35 կոպ. իսկ նորանից բարձր 40 կոպ.

**Գ. փոքրադիր ՕՐԱՑՈՑ 1882 թ. Ք.**

*Բոլոր օրհ. հրց. մկ. հմբ. և այլն դրուած են կարգաւ: Հանդերձ 2 գեղաքան. պատկերներով երջանկայիշատակն ՆԵՐՍԷՍ Ե. կաթուղիկոսն և Ջէմս Բրայս Հայասէրն անգղիացին:* Գինն է 15 կոպ: *Բոլոր 3 տետրակ օրացոյցներից գումարով գնողներին զեջում կը լինի:*

*Յանկացողները կարող են դիմել մեզ այս հասցէով.* Въ Г. Эривань *խմբագիր և հրատարակիչ Սրգար Գուլամիրեանց.* А. С. Гуламирянцъ.

---

## ОТКРЫТА ПОДПИСКА

НА ГАЗЕТУ

## „ДОНСКАЯ ПЧЕЛА“

НА 1882 ГОДЪ.

Съ 1-го Января 1882 года „Донская Пчела“ будетъ издаваться по той-же программѣ, какъ издавалась въ предъидущіе шест лѣтъ, два разьа въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что „Донская Пчела“ уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія рекламы положительно излишними.

**ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ.**

| *Съ доставкою въ Ростовъ н. Д.* | | *Съ пересылкою иногороднимъ* | |
|---|---|---|---|
| На годъ . . . . . | 6 руб. | На годъ . . . . . | 7 руб. |
| „ ½ года . . . . . | 3 „ 50 к. | „ ½ годъ . . . . | 4 „ |
| „ 3 мѣсяца . . . . | 2 „ | „ 3 мѣсяцъ . . . | 2 „ 50 к. |

**За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.**

Подписка принимается къ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абраміянъ. Иногородніе благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы“ въ Ростовъ на-Дону.

*Редакція покорнѣйше проситъ ин. иногородныхъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.*

Всѣмъ годовымъ подписчикамъ, прислашимъ до 25-го Декабря се. го 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, ‚ДОНСКО-АЗОВСКІЙ‘ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-Издатель *И. А. Теръ-Абраміянъ.*

---

*Ներքոյս լոյս տեսաւ և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում* **ԳՐԱԲԱՌԻ ՀՈՂՈՒՄԸ** *մի ազուսակի մէջ գործնական և գիտակցական ուսումն նասկրութեան համար: Գինն է 15 կոպէկ:*

---

ՁԵՆ ՀԱՍՑՐԱՒ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

10-ին դեկտեմբերի

Գրագօրչիկ Աղալարովին, Եվգրաֆ Խոսրօեվին, Միխայիլ Զախարովին, Ալեքսանդր Մուրատովին.

*Մամուլի տակից դուրս եկաւ* **ԹՋՈՒԿ** *գործ Ա. Ֆ. Գօդէի թարգմ. Տէր-Միքայէլեանց. Ցախվում է կենդրոնական և կովկասեան գրավաճառանոցում* **ՅՕԳՈՒՏ ԹԻՖԼԻՉԻ** *բէալական ուսումնարանի հայ աշակերտների ապագայ* **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ:** *Օտարաբաղաբացիք կարող են ուղղակի դիմել այս հասցէով.* Въ Тифлисъ. Реальное училище г. Теръ-Микелову.

---

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 14-го Декабря 1881 г.

Տպարանի Մ. Ոսկեհանց և ընկ.